# ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ «ԲԱՐՏԻ»Ի ՎՐԱՅ

Խորենացիէն կ'իմանանք որ Անուշաւան Սօս անուանիւր, և «Քանզի ծնեալ էր ըստ պաշտամանց ի սօսին Արամանեկայ, որ յԱրմաւիր. զորոց զսաղարթուցն սօսաւիւն, — ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն եւեթ ուստ (ընթերցիր երերուն*) շարժումն — սովորեցան ի հմայս աշխարհիս հայկազանց, և այս բազում ժամանակս». տպ. ՌՄՀԶ. 1828, էջ 97։ — Եթէ այժմու Այրարատեան գաւառին բնիկ բարտին նոյն է ընդ սօսին, ուրեմն ինչպէս Անուշաւան ըստ պաշտամանց, այսինքն՝ կրօնական իմն արարողութեամբ, նուիրուած էր սօսիներու, կարելի է ասել թէ էր նուիրուած և բարտիներուն։ Եթէ կային պաշտամունք և կրօնական արարողութիւնք, կը հետևի թէ կային նաև պաշտօնեայք, այսինքն քուրմեր՝ նուիրուած այդ կրօնական հմայից արարողութեան։ Արդ, մի և նոյն ծառին երկու անուն տալն աւելորդ բան մ'է. եթէ ծառն է սօսին, որոյ սաղարթուց սօսափիւնէն գուշակութիւնք կամ հմայք կ'անէին մեր հին հայկազունք, գուշակողք ապա պիտի լինէին Բարտիք։ Երբ «բազում ժամանակ» յետոյ դադարեցան այս պաշտամունք՝ Հայկազանց հարստութեան դադարելով, խափանեցաւ նաև սօսի անունն, և մնաց աւանդութեամբ ժողովրդեան մէջ՝ անհետացած քուրմերու անունն, յարակցուած մոգիչ ծառերուն, որք դեռ յիշեցնում են մեր Անուշաւանները։

Բարտին երկսեռ է, արու և էգ։ Իգն բարձրաձիգ է, ճղերն ամփոփ և սրածայր. իսկ արուն ոչ այնքան ուղղաձիգ և ճղերը փռուած։ Ուղղահայեաց հասակին շղոյշ կամ շուշ կ'ասեն, որ է՝ շիտակ։ Շուշն ակներեւ նոյն է ընդ սօսն, որ գուցէ յիշեցնում է իր նախնական հայրենիքը Սօս կամ Շօշ քաղաքն Մարաց։

Հայկական Ճեմարանին այս մեր առաջարկածն ալ վերջնական չենք համարիր։ Միայն մեր ուղղագրութեան մասին, դիտել կու տանք՝ որ «ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն՝ երերուն շարժումն» պէտք է ընդունել իբրև ի փակագծի, որպէս բացատրութիւն «զորոց զսաղարթուցն սօսաւիւն, սովորեցան ի հմայս աշխարհիս Հայկազանց»։ Սօսի կամ Բարտի ծառի տերևները կլորակ թաթաձև են և բարակ կանթով, և իբրև ականջի օղեր՝ կը կախուին ճղերուց. որոնք ըստ հանդարտ կամ ուժգին քամու փչելուն կ'երերան և սուլիչք կ'արձակեն, որ ըստ Խորենացւոյն ասի «սաղարթուցն սօսաւիւն»։ Ժողովուրդն այժմ եւս ծառերու թեթև շարժելուն երերալ կ'ասէ։

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

* Բարթողիմէոս Եպիսկոպոսի «Խորենացին Խորենացով պէտք է հասկանալ» գրքոյկի 16 երեսում. (Վաղարշապատ, 1899), երազոտ դիտողութիւններ կան, յորոց մին ալ կը հայի մեր «եւեթ ուստ» հռչակաւոր բառին. պէտք է ըսած որ ոչ մին համոզիչ չէն։

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ


## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — *Բարոյական ցեցեր* . . 241

— *Առակք Նախնեաց* . . 243

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ (*Քաղուածք*).

ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — ՀԻՆ ԴԷՄՔԵՐ. — *Սմբատ Գունդստապլ (Նախամարտիկ աշխարհաքարի դատին)* . . . . . . . . 244

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ Հ. Գ. — *Ուղղագրութիւններ Փաւստոս Բուզանդացու Պատմութեան* . . . 248

ՍԱՀԱԿԵԱՆ Հ. Կ. Տ. — *Վասիլ Բ. Բուլղարասպան*. 252

ՊՕՏՈՒՐԵԱՆ Հ. Մ. — ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ. — *Յովհաննէս Երզնկացի* . . 256

* * * — *Նամակի մը առթիւ* . . . . . 261

ՅՈՎՍԷՓԵԱՆ Հ. Ս. — *Հայազգի մանկուհիներուն փառաշուք ձեռագործները*. — *Թարգմ.* Giornale d'Italia *օրագրէն* . . . . 262

## ԿՐԹԱԿԱՆՔ

ՏՕՔԹ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ. — *Դպրոցական առողջապահութիւն. — Դաս Ե. Դպրոցական երամշտութիւն (շարունակութիւն եւ վերջ)* . . 267

ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — *Մանկավարժին ակնարկ մը (Ոտանաւոր)* . . . . . . 273

## ԳՐԱԿԱՆՔ

ՍԱՀԱԿԵԱՆ Հ. Կ. Տ. — *Ծովալճին վրայ երգ մը (Բանաստեղծութիւն)* . . . . . 274

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ. — *Մամուս աղօթքը (Բանաստեղծութիւն)* . . . . . . 274

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՕՅ. — ԳԻՒՐԿՐԱՎՆԵՐ. — *Թարգմ.* ԿՈՄԻՏԱՍ ՊԷՅ ՄԻՆԱՍԵԱՆԻ. . . . 275

Ս. ՔԼԻՉ ԴԸ ԼԱ ԳՐԱՆԺ. — *Տիբերիսի Նաւավարն (Պատմական վէպ)* . . . . . 282

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ Հ. Գ. — *Դիտողութիւն մը Բարտիի վրայ* . . . . . . . 288


digitised by A.R.A.R.@